Հաստատված է
Տնօրինության 30.06.2026թ.-ի նիստի
Թիվ DEC 12-57 արձանագրությամբ:
ՈՒԺի մեջ է 09.07.2026թ.-ից:

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել: Մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք www.fastbank.am հասցեով, դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Կոնտակտային կենտրոն՝ (+374 10) 510 000 հեռախոսահամարով:

POS ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐՈՎ (POS, ՀԴՄ POS, ՎԻՐՏՈՒԱԼ POS (VPOS)) ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ		
Սպասարկվող քարտեր	ArCa, Mastercard, Visa	
POS տերմինալի տեղադրում և ակտիվացում	Անվճար	
ՀԴՄ սարքի վրա POS տերմինալի ծրագրային ապահովում (լիցենզիայի տրամադրում և տեղադրում)		
Տեխնիկական սպասարկում, տերմինալների անդորրագրերի թղթերի և լոգոտիպերի տրամադրում		
Միջնորդավճարներ		
Փաթեթներ	**Easy**	**Standart**
Փաթեթների տարածման շրջանակ	ՀՀ Կենտրոնական Բանկի Խորհրդի 09.02.2026թ.-ի թիվ 27-Ն որոշման Հավելված 1-ի աղյուսակ 1-ով սահմանված Արքա վճարային համակարգի կանոնների համաձայն վաճառակետի տեսակի կոդ (Merchant category code) ունեցող այն տնտեսվարողների վրա, **1.** որոնց տարեկան իրացման շրջանառությունը նախորդող օրացուցային տարվա համար չի գերազանցում 150 000 000 ՀՀ դրամը և որոնք ներառ-ված են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող սույն սակագների ազդեցության գոտում գտնվող տնտեսավարողների ցանկում կամ, **2.** որոնք ՀՀ ԱՆ ԻԱ պետական ռեգիստրում գրան-ցում ստացել են 2026թ.-ին:	Easy փաթեթի ազդեցության գոտում չգտնվող ՊՈՍ տերմինալների և վիրտուալ ՊՈՍ տերմինալների դեպքում

Հաստատված է
Տնօրինության 30.06.2026թ.-ի նիստի
Թիվ DEC 12-57 արձանագրությամբ:
ՈՒԺի մեջ է 09.07.2026թ.-ից:

«Արմենիան Քարդ» ՓԲԸ պրոցեսինգային կենտրոնի անդամ հանդիսացող բանկերի կողմից թողարկված ArCa քարտեր	0.5%	1.2%
ՀՀ բանկերի կողմից թողարկված Visa և Mastercard քարտեր	0.9%	
«Արմենիան Քարդ» ՓԲԸ պրոցեսինգային կենտրոնի անդամ չհանդիսացող և միջազգային բանկերի կողմից թողարկված Visa և Mastercard քարտեր	2.2%	
POS տերմինալով իրականացվող ամսական նվազագույն շրջանառություն	Ամսական 500 000 ՀՀ դրամ *(Ամսական նվազագույն շրջանառության պայմանը չպահպանելու դեպքում Պայմանագիրը կարող է միակողմանիորեն լուծվել Բանկի կողմից)*	
Սպասարկման վճար	Եթե տրամադրած ՊՈՍ տերմինալներով (այդ թվում՝ ՀԴՄ-POS) կատարված ամսական ընդհանուր շրջանառությունը չի գերազանցում 50 000 ՀՀ դրամ գումարը, ապա գանձվում են՝ • *Երևան քաղաքում սպասարկման համար՝ ամսական 4 600 ՀՀ դրամ* • *մարզերի քաղաքներում սպասարկման համար՝ ամսական 3 000 ՀՀ դրամ* • *գյուղերում սպասարկման համար ամսական 1 000 ՀՀ դրամ*	Չի սահմանվում
Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վճար*	50 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)՝ պայմանագրի կնքումից հետո մեկ տարվա ընթացքում ՀԴՄ սարքի վրա POS տերմինալի ծառայությունը վաղաժամկետ դադարեցնելու կամ ՀԴՄ-ն փոխարինելու դեպքում	

Հաստատված է
Տնօրինության 30.06.2026թ.-ի նիստի
Թիվ DEC 12-57 արձանագրությամբ:
ՈՒԺի մեջ է 09.07.2026թ.-ից:

Պայմանագրի կնքման ժամկետը	Անժամկետ
Տեղադրման ժամկետ	Հայտի ակցեպտավորումից հետո առավելագույնը 3 աշխատանքային օր
POS տերմինալով մուտքագրված միջոցների կանխիկացում բանկային հաշվեհամարից	Համաձայն Բանկում գործող սակագների
POS-տերմինալի սպասարկման լրացուցիչ հնարավորություններ	
PreAuthorization	Գործարքի գումարի կամ դրանից ավել գումարի չափով Քարտապանի Վճարային քարտի գումարի սառեցման և մասնակի կամ ամբողջական գանձման հնարավորություն
Reversal	Մինչև 72 ժամվա ընթացքում ԱՍԿ-ում իրականացված գործարքի գումարի չափով ամբողջական կամ մասնակի չեղարկման՝ հետ վերադարձի հնարավորություն
Refund	ԱՍԿ-ում իրականացված գործարքի գումարի չափով ամբողջական կամ մասնակի չեղարկման՝ հետ վերադարձի հնարավորություն
Key Enter	POS տերմինալի վրա քարտի տվյալները ձեռքով մուտքագրելու հնարավորություն
Binding	Վճարային քարտի տվյալների կցման հնարավորություն տվյալ ԱՍԿ-ի ինտերնետային հարթակին
Recurring payment	Քարտապանի կողմից նախապես տրված համաձայնության հիման վրա վճարային քարտից սահմանված պարբերականությամբ նույն գումարի ավտոմատ գանձման հնարավորություն՝ առանց յուրաքանչյուր հաջորդ գործարքի համար քարտի տվյալների կրկնակի մուտքագրման:

** ՀԴՄ-ով վճարային քարտերի սպասարկման ծառայությունը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վճար չի գանձվում, եթե դադարեցման վերաբերյալ դիմումի ներկայացումից հետո «Ֆաստ Բանկ» ՓԲԸ-ի կողմից հաստատված նոր դիմումի հիման վրա տվյալ ՀԴՄ-ով քարտային ծառայությունների սպասարկումը շարունակվելու է իրականացվել «Ֆաստ Բանկ» ՓԲԸ-ում:*

Հաստատված է
Տնօրինության 30.06.2026թ.-ի նիստի
Թիվ DEC 12-57 արձանագրությամբ:
ՈՒԺի մեջ է 09.07.2026թ.-ից:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. POS տերմինալը Հաճախորդին տրամադրվում է անհատույց օգտագործման իրավունքով:
2. Տերմինալներով կատարված գործարքներից ստացված գումարները մուտքագրվում են Հաճախորդի համար Բանկում բացված հաշվեհամարին «Արմենիան Քարդ» ՓԲԸ պրոցեսինգային կենտրոնից ուղարկված հաշվարկային տեղեկատվությունը ստանալուց հետո 1-5 (մեկից հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
3. Գործարքների չեղարկման և/կամ գումարի հետ վերադարձի դեպքում գանձված միջնորդավճարները ենթակա են հետ վճարման:
4. Սույն պայմանները կարող են փոփոխվել՝ Հաճախորդին նախապես փոփոխության մասին 7 (յոթ) աշխատանքային օր առաջ ծանուցելով:
5. **ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՋԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:**
6. **ԲԱՆԿԸ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ և ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՐՈՂ Է ՍՊԱՌՈՂԻՑ «ՃԱՆԱՉԻՐ ՔՈ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ» («KNOW YOUR CUSTOMER») ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՊԱՀԱՆՋԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿԱՄ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:**
7. **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ, ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՈՐՈՆՔ ՈՒՂՂԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՈՂ ԵՆ ՈՒՆԵՆԱԼ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՎՐԱ (ՕՐԻՆԱԿ՝ «ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ» (FOREIGN ACCOUNT TAX COMPLIANCE ACT (FATCA) ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՄՆ-Ի ՀԵՏ ԿՆՔԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐ՝ ԱՄՆ ՀԱՐԿԱՏՈՒ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ՊԱՐԶԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ:**
8. **ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:**